ԺԱՄԱՆԱԿԻՆ ՀԱՄԱՔԱՅԼ #38

Ժամանակին Համաքայլ ամսագիրը պարունակում է տվյալ ամսում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից իրականացված գործունեության համապարփակ նկարագիրը:

ՄԻԱՎ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ, ԽՆԱՄՔՆ ՈՒ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

2019 թվականի սեպտեմբերի 27-ին տեղի ունեցավ «ՄԻԱՎ-ի կանխարգելումը, խնամքն ու աջակցությունը մարդու իրավունքների պաշտպանության համատեքստում» կլոր սեղան քննարկումը, որը կազմակերպվել էր «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից «Հանուն հզոր ապագայի» ՀԿ-ի հետ համագործակցությամբ, Էլթոն Ջոնի՝ ՁԻԱՀ-ի դեմ պայքարի հիմնադրամի և Տղամարդկանց առողջության եվրասիական կոալիցիայի (ԵԿՈՄ) ֆինանսավորմամբ՝ ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի ֆոնդերի հաշվին: ԷՋ 7-8

Հետապնդիր ԽԱՐԱՆԸ ոչ թե մարդկանց

Սեպտեմբերի 27-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն մեկնարկեց «Հետապնդիր խարանը, ոչ թե մարդկանց» մեդիա արշավը Հայաստանում: Մեդիա արշավի հայաստանյան ազգային նշանաբանն է՝ Լսելի դարձնենք համայնքի ձայնը: Մեդիա արշավը ուղեկցում էր «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի և «Հանուն հզոր ապագայի» ՀԿ-ի կողմից կազմակերպված «ՄԻԱՎ-ի կանխարգելումը, խնամքն ու աջակցությունը առողջության պահպանման համատեքստում» կլոր սեղան քննարկմանը, որի մասնակիցները և հյուրերը հնարավորություն ունեցան իրենց համերաշխությունը հայտնել արշավին՝ նկարվելով արշավի նպատակները արտահայտող պաստառի մոտ: Արշավին միացած հյուրերը որպես խորհրդանշական նվերներ ստացան արշավի լոգոյով և կարգախոսով բաժակներ: #հետապնդիրխարանըոչթեմարդկանց #chasestigma Մեդիա արշավի իրականացումը Հայաստանում հնարավոր է դարձել Տղամարդկանց առողջության եվրասիական կոալիցիայի աջակցությամբ:

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ-Ն ՄԵԿՆԱՐԿԵՑ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ 2020-2025

2019 թվականի օգոստոսի 28-ից «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի անձնակազմը մեկնարկեց կազմակերպության 2020-2025 թվականների ռազմավարական պլանավորման աշխատանքները:Փորձագետ Վարուժան Ավանեսյանի ուղղորդմամբ ՆՍՀԿ աշխատակիցները քննարկեցին և հստակեցրին, թե ինչ է իրենից ներկայացնում ռազմավարական պլանավորումը, ինչու է այն կարևոր և ինչ դեր ունի յուրաքանչյուրը դրա արդյունավետ իրականացման մեջ:
Բազմաթվ հետաքրքիր ու բովանդակալից վարժանքների միջոցով աշխատակիցները վերլուծեցին իրենք իրենց՝ գիտելիքները, հմտությունները, մոտիվացիաները և փորձառությունները, ապա իրենց ունեցած դերը կազմակերպությունում և ինչպես են տեսնում իրենց ու կազմակերպությունն ապագայում:Հանդիպման արդյունքում սահմանվեցին և հստակեցվեցին ոլորտները և ուղղությունները, որոնց շուրջ աշխատում է կազմակերպությունը, ինչպես նաև տեսնում է իրեն այդ ոլորտներում աշխատելիս նաև ապագայում:Հանդիպումից հետո նախատեսվում են նաև ոլորտային, ֆոկուս խմբային քննարկումներ աշխատակազմի համապատասխան խմբերի հետ՝ առանձին-առանձին:
«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի 2020-2025թթ. ռազմավարական պլանավորումը հնարավոր է դարձել Տղամարդկանց Առողջության Եվրասիական Կոալիցիայի ֆինանսական աջակցությամբ, ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ Հիմնադրամի ֆոնդերի հաշվին:

MSMIT ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԸ ՀԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

2019 թվականի օգոստոսի 30-31-ը Ծաղկաձոր քաղաքում տեղի ունեցավ «MSMIT գործիքի օգտագործումը» դասընթացը, որը վարեց «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ նախագահ, ՄԻԱՎ փորձագետ և MSMIT գործիքի դասընթացավարների դասընթաց անցած Սերգեյ Գաբրիելյանը: Դասընթացը կազմակերպվել էր «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ -ի կողմից «Առողջության իրավունք» ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվում է Տղամարդկանց առողջության եվրասիական կոալիցիայի (ԵԿՈՄ) կողմից:

Դասընթացի առաջին օրը հրավիրված մասնակիցները ծանոթացան առողջության պահպանման ուղղված միջոցառումների ցանկին, ՄԻԱՎ վիրուսին և ՄԻԱՎ-ի նկատմամբ խոցելի խմբերին: Օրը անցավ ակտիվ քննարկումների մթնոլորտում. մասնակիցները ներկայացրին իրենց և իրենց կազմակերպությունների փորձը ՄԻԱՎ-ի կանխարգելման գործում:

Մասնակիցների հետ քննարկումների արդյունքում ՀԿ ծրագրային աշխատող, սեռականության փորձագետ, դասընթացավար Հմայակ Ավետիսյանը օրը ավարտեց «Սեռականություն» թեմայով դասընթացով:
Մասնակիցները համալրեցին իրենց գիտելիքները թեմայի շուրջ:Դասընթացի երկրորդ օրը մասնակիցները ծանոթացան արդեն մշակված MSMIT փաթեթին, քննարկումների և բանավեճերի արդյունքում համալրեցին փաթեթը և հանդես եկան նոր առաջարկություններով:

LIFE 10

2019 թվականի օգոստոսի 31-ից սեպտեմբերի 1-ը տեղի ունեցավ «Առողջության իրավունք» ծրագրի շրջանակներում իրականացվող ԼԱՅՖ-10 արտագնա տեղեկատվական հարթակը, որն այս անգամ նախատեսված էր SUS սկսնակ ակտիվիստների համար:ԼԱՅՖ-10 արտագնա տեղեկատվական հարթակի նպատակն է SUS համայնքի ներկայացուցիչների շրջանում բարձրացնել սեռականության և առողջության իրավունքի վերաբերյալ գիտելիքների մակարդակը, նպաստել իրավագիտակցության բարձրացմանը, ծանոթացնել իրավունքների պաշտպանության ներպետական և միջազգային մեխանիզմներին, ինչպես նաև նպաստել համայնքների ներգրավվածությանը ՄԻԱՎ-ին հակազդման ազգային մարմիններում:

Արտագնա տեղեկատվական հարթակի առաջին օրը ՆՍՀԿ իրավաբան/փաստաբան, «Առողջության իրավունք» ծրագրի Իրավական խոչընդոտների հաղթահարման մասնագետ Անահիտ Մկրտչյանը ներկայացրեց պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման, ինչպես նաև ՀՀ բժշկական հիմնարկներում բժշկական անձնակազմի ցածր իրավագիտակցության և ԼԳԲՏ+ անձանց առնչվող բժշկական գիտելիքների ցածր մակարդակին, բժշկական անձնակազմի կողմից դրսևորվող խտրական վերաբերմունքին և խտրականության հաղթահարման մեխանիզմներին առնչվող իրավական կարգավորումները:

Տեղեկատվական հարթակի երկրորդ օրը ՆՍՀԿ ծրագրերի համակարգող, սեռականության փորձագետ Հմայակ Ավետիսյանը ներկայացրեց «Սեռականություն» թեման, որի շրջանակներում մասնակիցները խմբային խաղերի, ոչ ֆորմալ կրթական միջավայրի միջոցով ծանոթացան բարդ թեմային, բացահայտեցին սեռականության կոմպոնենտները, սկսեցին մտածել իրենց սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության մասին, տարբերեցին մի շարք կարևոր տերմիններ:Օրը շարունակվեց «Առաջնորդություն» թեմայով, որը վարեց ՀԿ նախագահ Սերգեյ Գաբրիելյանը՝ ներկայացնելով առաջնորդության ձևերը, տեսակները, առաջնորդի հատկանիշները:Հանդիպման ողջ ընթացքն ուղեկցվում էր տեսահոլովակների դիտմամբ և գործնական աշխատանքներով:ԼԱՅՖ-10 արտագնա տեղեկտավական հարթակի ավարտին մասնակիցներին հանձնվեցին վկայագրեր:

«Առողջության իրավունք» ծրագիրն իրականացվում է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից և ֆինանսավորվում է Տղամարդկանց Առողջության Եվրասիական Կոալիցիայի (ECOM) միջոցով, ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ Հիմնադրամի ֆոնդերից:

ՄԵՆՔ ԵՎ ՄԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

2019թ.-ի օգոստոսի 14-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ում ՆՍՀԿ իրավաբան Շուշան Խնկոյանի և ԼԳԲՏԻ անձանց ու համախոհների միջև տեղի ունեցավ «Մենք և մեր իրավունքները» թեմայով քննարկում-դասընթաց: Հանդիպման ընթացքում Շուշան Խնկոյանը ներկայացրեց իրավունք հասկացությունը, ԼԳԲՏԻ անձանց իրավունքներն ու պարտականությունները իրավապահ մարմինների հետ առնչվելիս, ինչպես պաշտպանել սեփական իրավունքները վիրավորանքի, զրպարտության դեպքում և տվեց սպառիչ պատասխաններ դասընթացի ժամանակ հնչեցրած բոլոր հարցերին: Դասընթացը ուղեկցվեց բուռն քննարկումներով, հարց ու պատասխանով և ակտիվ բանավեճերով:

Դասընթացի նպատակն էր տրամադրել խորացված գիտելիքներ մասնակիցների իրավունքների վերաբերյալ, տեղեկացնել թե երբ են օրինապահ մարմինները խախտում իրենց իրավունքները և ինչպես կարելի է դրանք պաշտպանել:

ՄԻԱՎ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՐՁԵԼ Է ԱՌԱՎԵԼ ՀԱՍԱՆԵԼԻ, ՔԱՆ ԵՐԲԵՎԷ

ՄԻԱՎ-ը՝ Մարդու իմունային անբավարարության վիրուսը, ժամանակին ախտորոշելու դեպքում լիովին վերահսկելի է, այնինչ մինչ օրս շատերը ՄԻԱՎ-ը նույնացնում են ՁԻԱՀ-ի՝ Ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշի հետ և ախտորոշումը համարում մահվան դատավճիռ: Իրականում ՁԻԱՀ-ը ՄԻԱՎ-ի վերջնային փուլն է: ՄԻԱՎ-ի վերաբերյալ պարբերաբար հետազոտվելը կօգնի ժամանակին հայտնաբերել և վերահսկել այն:

«ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունը դարձել է առավել հասանելի, քան երբևէ»,- ասում է «ՄԻԱՎ-ի կանխարգելումը Հայաստանի SUS, ԿՍԿ և տրանս անձանց շրջանում» ծրագրի համակարգող Արտյոմ Մովսեսյանը, որը մասնակցում էր «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնում» կազմակերպված ՄԻԱՎ-ի թեստավորման և կանխարգելման վերապատրաստման սեմինար-վարժանքին: Ծրագրի օգնական Լևոն Չիլինգարյանը նշում է. որ «2017 թվականի օգոստոսից ՆՍԿԿ-ի շահառուներն արդեն իսկ հնարավորություն ունեն անվճար, գաղտնի և անանուն ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն անցնել կազմակերպության գրասենյակում: Սա ենթադրում է, որ որպես խորհրդատու վերապատրաստված աուրիչ աշխատակիցը կարող է հետազոտություն իրականացնել ինչպես շահառուի տանը, այնպես էլ այն վայրերում, որտեղ հնարավոր է ապահովել հետազոտության իրականացման համար անհրաժեշտ նախապայմանները՝ ջերմաստիճան, լուսավորություն, գաղտնիություն և այլն»: Թեստավորման վերաբերյալ վիդեո-ուղեցույցին կարող եք ծանոթանալ ԱՅՍՏԵՂ:

Վերապատրաստման դասընթացը կարևոր է նրանով, որ անմիջականորեն թիրախային խմբերի հետ աշխատող անձինք, այս դեպքում՝ աուրիչ աշխատակիցներն ամրապնդում են ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի վերաբերյալ իրենց գիտելիքների պաշարներն ու ձեռք են բերում համապատասխան մասնագիտական հմտություններ՝ իրենց իսկ շահառուների շրջանում ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն անցկացնելու համար: Սա իր հերթին հնարավորություն է ստեղծում այս հետազոտությունը դարձնել առավել հասանելի այն խմբերի համար, որոնց հետ աշխատում է կազմակերպությունը:Վերապատրաստման դասընթացը իրականացվում է ՀՀ ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի կողմից:

ՄԻԱՎ-ի կանխարգելումը Հայաստանի SUS, ԿՍԿ և Տրանս անձանց շրջանում ծրագիրը ֆինանսավորվում է ՀՀ Առողջապահության նախարարության կողմից՝ ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ Հիմնադրամի ֆոնդերի հաշվին:

Նոր Սերունդ Մարդասիրական ՀԿ-ն ներկայացնում է 2019թ.-ի օգոստոս ամսին ՄԻԱՎ-ի վերաբորյալ SUS-ների հետազոտություն անցած վիճակագրական տվյալները

ԹՈՐՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԱԾ SUS

ՄԻԱՎ ԴՐԱԿԱՆ ՆՈՐ ԴԵՊՔ

ՎԵՐՑՐՎԵԼ Է ԴԻՍՊԱՆՍԵՐԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ՝ ԲՈՒԺՄԱՆ, ԽՆԱՄՔԻ ԵՎ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԳԱ ՏՐԱՄԱԴՐՄԱՄԲ

ՎԻԴԵՈ—ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՀԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԵԼՈՒՅԹԸ «ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ»-Ի ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

2019թ.-ի սեպտեմբերի 1-ից 8-ը Գերմանիայի Մյունխեն քաղաքում և Մյունխենի արվարձաններից Զեյեսհաուպտ (Seeshaupt)-ում տեղի ունեցավ «ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ» միջմշակութային երկխոսության զարգացման և անհանդուրժողականության դեմ պայքարի ծրագիրը:Ծրագրին մասնակցում էին երիտասարդական աշխատողներ և ակտիվիստներ Գերմանիայից, Լատվիայից, Չեխիայից, Բելառուսից և Հայաստանից:Հայաստանից մասնակցում էին 15 երիտասարդներ, այդ թվում փաստաբաններ, հոգեբաններ, բժիշկներ և քաղաքագետներ:«Հանդուրժողականության ակադեմիայի» ընթացքում մասնակիցները հնարավորություն ունեցան.

- ծանոթանալու խտրականության թեմայով աշխատանքի կրեատիվ մեթոդներին:
- մասնակցելու տարատեսակ ստեղծագործական վարպետության դասերի (ստվերային թատրոն (Ելենա Շտուկ- Բոժկո / Բելառուս), լուսանկարչություն (Եկատերինա Պոնոմարենկո / Գերմանիա), ստեղծագործական արհեստանոց (Ելենա Բոնդար / Գերմանիա), անիմացիա (Օլեսյա Շուկինա / Ֆրանսիա, պլաստիկ թատրոն (Իգոր Շուգալեև / Բելառուս):
- իմանալու ժամանակակից աշխարհում խտրականության և անհավասարության տարբեր պատճառների, տեսակների և հիմքերի մասին:
- մասնակցելու հետաքրքիր էքսկուրսիոն ծրագրին և ձեռք բերելու նոր ընկերներ:

«ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ» շրջանակներում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ իրավաբան/ փաստաբան Անահիտ Մկրտչյանը մասնակիցներին ներկայացրեց «Խտրականություն» թեման՝ դրանք ուղեկցելով ինտերակտիվ վարժություններով ու տեսահոլովակների դիտմամբ: Ներկայացման ընթացքում անդրադարձ կատարվեց ՀՀ գործող օրենսդրությանն ու իրավական խոչընդոտներին խտրականության կանխարգելման ոլորտում:

Հիշեցնենք, որ ծրագրի նպատակներն էին.

- երիտասարդների միջև հանդուրժողականության և միջմշակութային երկխոսության զարգացում:
- միջմշակութային կրթության և խտրականության ու անհավասարության դեմ պայքարի մեթոդների մշակում և ընդունում:
- տարբեր երկրների մասնակիցների միջև համագործակցության զարգացում:

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ-Ն ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵՑ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ ԺԱՄԱՆԱԾ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

2019 թ. սեպտեմբերի 8-15-ը «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն հյուրընկալեց Գերմանիայից ժամանած երիտասարդական 6-հոգանոց պատվիրակությանը հայ-գերմանական երիտասարդական փոխանակման ծրագրի շրջանակներում:Ճանաչողական այցի շրջանակներում մասնակիցները այցելեցին Երևանում երիտասարդական, մարդու իրավունքների հարցերով զբաղվող մի շարք ՀԿ-ներ, ինչպես նաև Հայաստանի մշակութային և ժամանցային վայրեր: Նրանք աշխատանքային, ճանաչողական հանդիպումներ ունեցան APY Հայ Առաջադեմ Երիտասարդություն, Իրական աշխարհ Իրական Մարդիկ, Մարդու իրավունքների տուն Երևան կազմակերպություններում, ինչպես նաև այցելեցին Հայաստանի տեսարժան, մշակութային վայրերը՝ Հայոց ցեղասպանության հիշատակին նվիրված Ծիծեռնակաբերդ համալիր, հեթանոսական Գառնի տաճար, Գեղարդի վանք, Սևանա լիճ և Տաթևի վանական համալիր:Գերմանիայից ժամանած մասնակիցները իրենց երկիր վերադարձան լավ հուշերով և տպավորություններով՝ Հայաստանը կրկին այցելելու ցանկությամբ:

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ» ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ-Ն ԱՊԱՀՈՎԵԼ Է «ՀԱՅ ԱՌԱՋԱԴԵՄ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ» ՀԿ-Ի ԴԱՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆԸ

2019թ. ապրիլի 05-ին 5-րդ ալիք/ 5 TV-ի «Դեմ Դիմաց» հաղորդման հերթական եթերում BlogNews.am կայքի գլխավոր խմբագիր Կոնստանտին Տեր-Նակալյանը արել է կեղծ հայտարարություն՝ պնդելով, որ «Հայ Առաջադեմ Երիտասարդություն» ՀԿ-ն Կոտայքի մարզի դպրոցում ԼԳԲՏ քարոզչություն է իրականացրել: Հաջորդ օրը 06.04.2019թ.-ին «Հայ Առաջադեմ Երիտասարդություն» ՀԿ-ն իր ֆեյսբուքյան էջում հայտարարության տեսքով տեղադրել է «Հերքման պահանջ»՝ ուղղված Կոնստանտին Տեր-Նակալյանին: 2019թ.-ի ապրիլի 12-ին «ԱԴԵԿՎԱԴ» անվամբ ֆեյսբուքյան էջում տեսանյութ է տեղադրվել «Բոլոր գեյապաշտ, աղրբեջանամետ քայլառաստներից ներողություն ենք խնդրում» վերնագրով: Նույն օրը՝ ժամեր անց Պատասխանողն իր ֆեյսբուքյան էջում տեղադրել է տեսահոլովակ «Ներողության հերթական փորձը Grigor Yeritsyanից» վերնագրով, որը նույնպես ինչպես նախորդ փորձը, իր էությամբ չէր կրում Հերքմանբավարար հատկանիշներ: Վերը նշված շարունակական գործողությունների արդյունքում վնաս է պատճառվել «Հայ Առաջադեմ Երիտասարդություն» ՀԿ-ի գործարար համբավին:Ստեղծված իրավիճակում վնաս կրած կազմակերպությանը իր աջակցությունն է հայտնել «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն և տրամադրել անվճար փաստաբանական ծառայություններ:Գործում ներգրավվել է փաստաբան Անահիտ Մկրտչյանը:Արդյունքում, 06.05.2019թ.-ին հայցադիմում է ներկայացվել Դատարան ընդդեմ BlogNews.am կայքի գլխավոր խմբագիր Կոնստանտին Տեր-Նակալյանի, 5-րդ ալիք/ <<ՇԱՐԿ>> ՍՊԸ-ի, Արթուր Դանիելյանի՝ զրպարտություն համարվող հայտարարությունը հերքելու, վիրավորանքի համար ներողություն խնդրելու և որպես պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավն արատավորող գործողություններից պաշտպանվելու միջոց փոխհատուցում վճարելու պահանջների մասին:28-08-2019թ.-ին Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի Էրեբունու նստավայրում դատավոր Տ. Ստեփանյանի նախագահությամբ տեղի է ունեցել գործով դատաքննությունը: Դատաքննության ընթացքում Հայցվոր կողմը նշել է, որ ի թիվս այլ դրդապատճառների, Պատասխանողների վարքագծի հիմքում մեծապես ընկած է քաղաքական ենթատեքստն ու խտրականությունը:

Հերթական դատաքննությունը նշանակվել է 08-11-2019թ.-ին:

Փաստաբանական աջակցության տրամադրումը հնարավոր է դարձել Նորվեգիայի Հելսինկյան կոմիտեի ֆինանսական աջակցությամբ, «Նոր սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից:

Հակիրճ տեղեկատվություն ՆՍՀԿ իրավական գործերի վերաբերյալ

Մարդու իրավունքների եվրոպական դատարան

ՄԻԵԴ-ի կողմից կոմունիկացվել է ՆՍՀԿ փաստաբանների կողմից ներկայացված 3 գանգատ՝

- Ս. Պետրոսյանն ընդդեմ Հայաստանի (ՄԻԵԿ, հոդված 5՝ ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք)
- Ա. Սարգսյանն ընդդեմ Հայաստանի (ՄԻԵԿ, հոդված 5՝ զատության և անձնական անձեռնմխելիության իրավունք)
- Ա. Սահակյանն ընդդեմ Հայաստանի (ՄԻԵԿ, հոդված 5՝ ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք)

2 վարչական գործ.

- ՆՍՀԿ-ն ընդդեմ ՀՀ ոստիկանության (տեղեկատվության տրամադրման պարտավորեցման պահանջի մասին)
- ՆՍՀԿ-ն ընդդեմ ճանապարհային ոստիկանության (տեղեկատվության տրամադրման պարտավորեցման պահանջի մասին)

ՀՀ ներպետական ատյաններում դատական գործեր.

ՆՍՀԿ-ն տվյալ պահին ունի դատական ատյաններում քննվող 3 քրեական, 2 քաղաքացիական և 2 վարչական գործեր.

2 քաղաքացիական գործ.

- ՆՍՀԿ-ն ընդդեմ Հրապարակ օրաթերթի (զրպարտություն համարվող փաստացի տվյալները հերքելու և վնասի փոխհատուցման պահանջների մասին հայցադիմում)
- ՆՍՀԿ-ն ընդդեմ Գևորգ Պետրոսյանի, ԿԱՄՔ նախաձեռնության (զրպարտություն համարվող փաստացի տվյալները հերքելու և վնասի փոխհատուցման պահանջների մասին հայցադիմում)

3 քրեական գործ.

- Ժ. Հ. (ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 258, 4-րդ մաս)
- Է. Ա. (Ժակլին), (ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 112)
- Ա. Ա. (ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 258)

Ա. Ս. (ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 258)

Ս. Պ. (ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 258)

ՆՍՀԿ իրավաբանների կողմից տրամադրվել է հետևյալ թվով անվճար իրավաբանական խորհրդատվություններ.

- **2018թ.- 407 խորհրդատվություն**
- **2019թ.(հունվար-սեպտեմբեր)- 394խորհրդատվություն**

ՄԻԱՎ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ, ԽՆԱՄՔՆ ՈՒ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

2019 թվականի սեպտեմբերի 27-ին տեղի ունեցավ «ՄԻԱՎ-ի կանխարգելումը, խնամքն ու աջակցությունը մարդու իրավունքների պաշտպանության համատեքստում» կլոր սեղան քննարկումը, որը կազմակերպվել էր «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից «Հանուն հզոր ապագայի» ՀԿ-ի հետ համագործակցությամբ, Էլթոն Ջոնի՝ ՁԻԱՀ-ի դեմ պայքարի հիմնադրամի և Տղամարդկանց առողջության եվրասիական կոալիցիայի (ԵԿՈՄ) ֆինանսավորմամբ՝ ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի ֆոնդերի հաշվին: Քննարկմանը մասնակցում էին Հայաստանում դիվանագիտական առաքելությունների և միջազգային և տեղական կազմակերպությունների, ՀՀ նախարարությունների ներկայացուցիչներ,փաստաբաններ, իրավաբաններ, իրավապաշտպաններ, ակտիվիստներ և համայնքի ներկայացուցիչներ:Քննարկման սկզբում բացման խոսքով ելույթ ունեցավ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ նախագահ Սերգեյ Գաբրիելյանը, ով իր խոսքում մասնավորապես նշեց, որ կազմակերպությունը շատ է կարևորում ՄԻԱՎ-ի կանխարգելման ծրագրերի իրականացումը Հայաստանում և ջատագովում է դրանց շարունակականության ապահովումը:

Այնուհետև ողջույնի խոսքով հանդես եկան օտարերկրյա դիվանագիտական կառույցների ներկայացուցիչները: Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգող Շոմբի Շարփը նշեց, որ մեծ պատիվ է ներկա գտնվել նման հանդիպմանը, տեսնել ընկերներ, ծանոթ դեմքեր: Նա իր խոսքը ավարտեց այն մտքով, որ ՄԻԱՎ-ի կանխարգելումը միայն առողջապահական խնդիր չէ, այն վերաբերում է մարդու հիմնարար իրավունքներին, կայուն զարգացմանը, կրթական մակարդակին:

ՀՀ Առողջապահության նախարարության ներկայացուցիչ, ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի ծրագրերը համակարգող խմբի ղեկավար Հասմիկ Հարությունյանը ողջույնի խոսք հղեց նախարարության անունից՝ նշելով, որ շատ է կարևորում պետական սեկտորի և քաղաքացիական հասարակության միջև համագործակցությունը, առանց որի հնարավոր չէ հասնել ՄԻԱՎ-ի հակազդման ծրագրերում ներկայացված ամբիցիոզ նպատակներին:Ողջույնի խոսքով հանդես եկավ նաև Տղամարդկանց առողջության եվրասիական կոալիցիայի գործադիր տնօրեն Վիտալի Ջուման: Նա ուրախությամբ նշեց, որ տարածաշրջանում Հայաստանը ՄԻԱՎ-ի տարածման առումով համեմատաբար լավ վիճակում է, քան, օրինակ, հարևան Վրաստանը: Պարոն Ջումային նաև հաճելի էր հանդիպմանը տեսնել բոլոր շահագրգիռ կողմերին, դիվանագիտական և պետական մարմիններին, ՄԻԱՎ-ի նկատմամբ խոցերի խմբերի և նրանց հիմնախնդիրներով զբաղվող ՀԿ-երի ներկայացուցիչներին: Նա ավարտեց իր ելույթը հետևյալ մտքով. «Միասին մենք ավելի ուժեղ ենք, միայնակ ոչ մեկը չի կարող»:

Ողջույնի խոսքերից հետո հրավիրված խոսնակները անդրադարձան Գլոբալ հիմնադրամի և Էլթոն Ջոնի՝ ՁԻԱՀ-ի դեմ պայքարի հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ Հայաստանում իրականացվող ՄԻԱՎ-ի կանխարգելման ծրագրերին, Հայաստանում ՄՀՀ աշխատանքին, որոշումների կայացման գործընթացում համայնքահեն կազմակերպությունների և համայնքների ներգրավմանը, ՄԻԱՎ-ի կանխարգելման ոլորտում համագործակցության ուղիներին և մարտահրավերներին, ՄԻԱՎ-ի կանխարգելման պետական դրամաշնորհային ծրագրերին,

առողջապահական ոլորտում խարանին և խտրականությանը:

Քննարկման ընթացքում ներկայացվեց նաև «Առողջության իրավունք» ծրագրի շրջանակներում իրականացվող ՄԻԱՎ-ին առնչվող ծառայությունների կասկադ վերլուծությունը, որը դեռ գտնվում է մշակման փուլում, իսկ ավարտից հետո կկազմակերպվի աշխատանքային հանդիպում դրա վերջնական քննարկման ու ներկայացման համար: Ներկայացվեցին նաև «Առողջության իրավունք» ծրագրի շրջանակներում մշակված «ՔՀԿ-ների ֆինանսական աղբյուրների կարգավորող ազգային օրենսդրության վերլուծությունը» և «Համայնքից համայնքի համար» ծրագրի շրջանակներում մշակված համապարփակ զեկույցը:

առողջապահական ոլորտում խարանին և խտրականությանը:

Հայաստանում ՄՀՀ աշխատանքի վերաբերյալ քննարկումների ընթացքում ԵԿՈՄ-ի խորհրդի անդամ Սվիտոսլավ Շերեմետը նշեց, որ համայնքի ձայնը պետք է անձամբ և անմիջապես լսելի լինի որոշումների կայացման գործընթացում, ինչը հնարավորություն կտա համայնքին իր խոսքը ուղղակիորեն հասցնել պետական գործիչներին և այլ շահագրգիռ կողմերին, վերջիններս էլ հնարավորություն կունենան առաջին աղբյուրից տեղեկանալ համայնքի խնդիրներին:Քննարկվեցին նաև ոլորտային առողջապահական և օրենսդրական խնդիրները և դրանց հնարավոր լուծման ուղիները:

Քննարկման ավարտին ձեռք բերվեց պայմանավորվածություն հնչեցված բոլոր առաջարկությունները հավաքագրելու, խմբագրելու և պետական ու միջազգային կառույցներին ներկայացնելու վերաբերյալ

:Կլոր սեղան քննարկմանը ուղեկցում էր նաև «Հետապնդիր խարանը, ոչ թե մարդկանց» մեդիա արշավը, որի հայաստանյան ազգային նշանաբանն է՝ լսելի դարձնենք համայնքի ձայնը: Հանդիպման մասնակիցները և հյուրերը հնարավորություն ունեցան իրենց համերաշխությունը հայտնել արշավին՝ նկարվելով արշավի նպատակները արտահայտող պաստառի մոտ: Արշավին միացած հյուրերը որպես խորհրդանշական նվերներ ստացան արշավի լոգոյով և կարգախոսով բաժակներ:

Մեդիա արշավի իրականացումը Հայաստանում հնարավոր է դարձել Տղամարդկանց առողջության եվրասիական կոալիցիայի աջակցությամբ: